ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«11» 05 2023թ.
No 004069

**«ՄԱՆԱՇ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Նոր Արեշ թաղ., 11, 26)

Հարգելի՛ տիկին Մարգարյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի նոյեմբերի 8-ի ««Յանդեքս Սնունդ Էյէմ», «Յանդեքս.տաքսի Էյէմ», «Ռայդտեխ Ինթերնեյշնլ Բ.Վ.» և «Ֆուդտեք ընդ Դելիվերի Բ.Վ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 426-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-02976 վարույթը (այսուհետ՝ **Թիվ ՀԳ-02976/22 վարույթ**):

Միաժամանակ 2023 թվականի ապրիլի 18-ի ««Յանդեքս Սնունդ Էյէմ», «Յանդեքս.տաքսի Էյէմ», «Ռայդտեխ Ինթերնեյշնլ Բ.Վ.» և «Ֆուդտեք ընդ Դելիվերի Բ.Վ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02976/22 վարույթով «Յանդեքս Դելիվերի Էյէմ», «Ֆուդ Դելիվեռի1» և «Յանդեքս Եդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին որպես նոր պատասխանողներ ներգրավելու և վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 180-Ա որոշմամբ Հանձնաժողովը «Յանդեքս Դելիվերի Էյէմ», «Ֆուդ Դելիվեռի1» և «Յանդեքս Եդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին Թիվ ՀԳ-02976/22 վարույթով ներգրավել է որպես նոր պատասխանողներ:

Այդ կապակցությամբ, հիմք ընդունելով վարչական վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում «Մանաշ» և «Յանդեքս Դելիվերի Էյէմ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների միջև կնքված և գործող պայմանագր(եր)ի, համաձայնագր(եր)ի, դրանց հավելված(ներ)ի պատճեն(ներ)ը:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն
Կատարող՝ Լուսինե Ղազարյան
Հեռ. (+374 60) 830-840 (231)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 27 հունիսի 2023 թվական: